Խሀባበባ ዐቦረ ጌተደ / BLESSING OF GRAPES

Հայաստանեայց Առաջելական Եկեղեցւոյ Հոգեւոր-բարեպաչտական սովորութիւններէն մէկն է խաղողօրՀնէջը։ Արարողութիւնը ծագում առած է Նաւասարդեան Տօնէն, զոր մեծ Հանդիսութեամբ տօնած են մեր նախաջրիստոնեայ նախահայրերը՝ Թագաւորով, աւագանիով եւ ժողովուրդով։ Ընթացջին՝ Երինջներ, ցուլեր եւ ջաղցրահամ պաուղներ կը զոհաբերէին Արամազդ, Անահիտ, Աստղիկ եւ Վահագն չաստուածներուն։

Խորհրդանչական իմաստով, եկեղեցի բերուած խաղողի բերքի օրհնութեամբ, Հայ Եկեղեցին կ'օրհնէ նաեւ Հայոց ամբողջ այդեստանները։

It is a good custom and tradition to offer to God all first fruits with blessing. However, since it would have proved impractical to bless each fruit separately, grapes, as the noblest of fruits and the essence of joyinducing wine, also a symbol of communion, is blessed in our church in place of all other fruits, in keeping with established ritual.

The day of the blessing of the grapes is the feast of Uuunnuoùuòμû (Mother of God) and established by St. Gregory the Illuminator not because of any theological connection, but because our pre-Christian ancestors used to celebrate the new year on that week and emotionally were very connected to it.

& &

Սուրբ Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով, Տէր Հայրն ու Հոգաբարձութիւնը կը չնորհաւորեն բոլոր Մարիամները, Մարիները, Մարօները, Տիրուհիները, Իսկուհիները, Սրբուհիները, Մաջրուհիները, Թագուհիները, Լուսաբերները, Երանուհիները, Պերձուհիները, Բերկրուհիները, Ազնիւները, Անթառամները, Արուսեակները, Վերժինները, Արչալոյսներն ու Գեղանոյչները եւ իրենց կը մաղթեն առողջութիւն եւ երկար կեանը։

On the occasion of the feast of The Assumption of Soorp Asdvadzadzin, Der Hayr and the Board of Trustees congratulate all those whose names are Mariam, Mary, Maro, Diroohi, Isgoohi, Srpoohi, Makroohi, Takoohi, Loossaper, Yeranoohi, Berjoohi, Pergroohi, Azniv, Antaram, Aroosyag, Vergine, Arshalooys and Keghanoosh and wish them a happy and healthy life.

@ G

*** Altar flowers are donated by Irma Kassabian in memory of her loved ones.

Ս. ԽԱՉ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

SOORP KHATCH ARMENIAN APOSTOLIC CHURCH

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ASSUMPTION OF THE HOLY MOTHER OF GOD

շԱՅՆ ԴԿ



*Մ. Պատարագ Առ. Ժամը 10։30-ին հեռարձակում*Divine Liturgy 10։30 A.M. Live Streamed

Soorp Khatch Armenian Apostolic Church 4906 Flint Drive, Bethesda, MD 20816 Office Hours: 10:00 a.m-2:00 p.m.

Phone: (301) 229-8742; Fax: (301) 229-9393

E-mail: <u>soorpkhatch@verizon.net</u> Web Page: www.soorpkhatch.org

Archpriest Fr. Sarkis Aktavoukian, Pastor Home Phone: (301) 977-1863; Cell: (301) 787-5506

DER VOGHORMIA

All Sick



Parishioners

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ

---- (3:29 - 4:7) -----

Արդ ուրեմն, եթէ Քրիստոսի կը պատկանիք, կը նշանակէ թէ դուք Աբրահամի զաւակներ էք եւ պիտի ժառանգէք ինչ որ Աստուած անոր խոստացաւ։

Բայց գիտցէ՛ք նաեւ, թէ ժառանգորդ մը թէպէտ ամբողջ ժառանգութեան իսկական տէրն է, բայց որքան ատեն որ անչափահաս է՝ տարբերութիւն չունի ծառայէ մը, քանի խնամակալներու եւ հոգաբարձուներու ենթակայ է, մինչեւ հասնի իր հօրը որոշած ժամանակակէտը։ Նոյնն է մեր ալ պարագան։ Որքան ատեն որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն կ'ենթարկուէինք ու կը ծառայէինք։ Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհ որկեց իր Որդին, որ կնոջմէ մը ծնաւ եւ Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեզ Օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ որդիներ դարձնէ։ Արդ, որովհետեւ իր որդիներն ենք՝ Աստուած մեր սիրտերուն մէջ որկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած «Աբբա», այսինքն «Հայր» կը կոչենք։ Ուստի այլեւս ծառայ չէք, այլ՝ որդի. եւ քանի որդի էք՝ Աստուծոյ խոստումը պիտի ժառանգէք։

ՑԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

---- (2:1 - 7) -----

Այդ օրերուն, Օգոստոս կայսր հրամանագիր հանեց՝ իր կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող բոլոր բնակիչներուն մարդահամարը կատարելու։ Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ Սուրիայի կառավարիչ Կիրենիոսի օրերուն։ Ամէն մարդ իր ծննդավայր քաղաքը կ'երթար՝ իր անունը արձանագրել տալու համար։ Յովսէփ, Դաւիթի ցեղէն եւ ազգատոհմէն ըլլալուն համար, Գալիլեայի Նազարէթ քաղաքէն ելաւ եւ իր անունը արձանագրել տալու համար գնաց Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքը, Դաւիթ թագաւորին ծննդավայրը։ Իրեն կ'ընկերանար իր նշանածը՝ Մարիամ, որ յղի էր։

Բեթլեհէմի մէջ Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասաւ եւ ծնաւ իր անդրանիկ զաւակը, որ փաթթեց խանձարուրի մէջ եւ դրաւ մսուրի մը մէջ, որովհետեւ պանդոկին մէջ իրենց համար տեղ չկար։

SCRIPTURE READINGS GALATIANS 3:29 - 4:7

If you belong to Christ, then you are Abraham's seed, and heirs according to the promise.

What I am saying is that as long as the heir is a child, he is no different from a slave, although he owns the whole estate. He is subject to guardians and trustees until the time set by his father. So also, when we were children, we were in slavery under the basic principles of the world. But when the time had fully come, God sent his Son, born of a woman, born under law, to redeem those under law, that we might receive the full rights of sons. Because you are sons, God sent the Spirit of his Son into our hearts, the Spirit who calls out, "Abba, Father." So you are no longer a slave, but a son; and since you are a son, God has made you also an heir.

LUKE 2:1-7

In those days Caesar Augustus issued a decree that a census should be taken of the entire Roman world. (This was the first census that took place while Quirinius was governor of Syria.) And everyone went to his own town to register.

So Joseph also went up from the town of Nazareth in Galilee to Judea, to Bethlehem the town of David, because he belonged to the house and line of David. He went there to register with Mary, who was pledged to be married to him and was expecting a child. While they were there, the time came for the baby to be born, and she gave birth to her firstborn, a son. She wrapped him in cloths and placed him in a manger, because there was no room for them in the inn.



FEAST OF THE ASSUMPTION OF THE HOLY MOTHER OF GOD

On the occasion of the Assumption of the Holy Mother of God, our traditional madagh lunch and blessed grapes will be served following the badarak.

ՎԵՐԱՓՈԽՈՒՄ/ASSUMPTION/VERAPOKHOOM

U. Աստուածածնի մահանալուն եւ երկինք փոխադրուելուն յիչատակի տօնն է, որ ծանօն է նաեւ «Աստուածածին», «Փոխումն» կամ «Ննջումն» անուններով։

Եկեղեցին կ՚ընդունի որ Քրիստոս անձա՛մբ եկաւ իր մայրը երկինք փոխադրելու, հետեւաբար տէրունի տօնին յիչատակութիւնը ժամերգութեան եւ պատարագի ընթացքին կը կատարուի «Գալուստ ի փոխումն մօրն» բացատրութեամբ։

Վերափոխումը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հինդ տաղաւար տօներէն մէկն է եւ կը կատարուի Օգոստոս 15-ին մօտակայ, այսինքն՝ Օգոստոս 12-էն մինչեւ 18 Հանդիպող Կիրակին։ Տօնը ունի նաեւ չաբաԹապաՀք, նաւակատիք եւ մեռելոց։

This is the commemoration of St. Mary's death and translation to heaven, which is represented as hnhunu (transition) or alignul (sleep, demise).

Since the church believes that Christ Himself came to take up His mother, the dominical feast is commemorated with the expression, "The coming for the translation of His mother".

Assumption is one of the five major feasts known as tabernacles, and takes place close to August 15 -on the Sunday that falls between August 12 and August 18- and comprises a week of fasting, üuuuluunhp, and a Memorial Day.

UUSUZ

Հայաստանեայց Առաջելական Եկեղեցւոյ ծիսական առանձնայատկութիւններէն մէկն է մատաղօրգնէջը։ Մատաղը Աստուծոյ ընծայաբերուող նուէր է եւ գետեւաբար կը մատուցուի կենդանիներուն ամենաընտիրը՝ արջառ, ոչխար, գաւ, աղաւնի, ...եւայլն։ Այսօր ընդունուած է մատուցել միայն արու կենդանիներ, մինչ գին ժամանակներուն մատուցուած են ե՛ւ արու ե՛ւ էգ կենդանիներ գաւասարապէս։

Մատարի միսը պէտք է եփի օրհնուած աղով, կամ անասունը մորթելէն առաջ պէտք է աղ կերցնել՝ կուռքերուն մատուցուած մատաղներէն զանազանելու համար։ Ըստ Ստեփանոս Արքեպիսկոպոս Օրփէլեանի, աղը խորհրդանիչն է առաքեալներուն («Դուք էք երկրի աղը», Մատթ. 5.13), իսկ անբան կենդանիները՝ հեթանոսներուն։ Եւ ինչպէս որ առաքեալներուն խօսքերը կը սրբեն մեզ, այնպէս ալ աղը կը սրբէ անասունը իր սկզբնական անիծուածութենչն։

Մատարի սովորութիւնը գոյութիւն ունեցած է Դ. դարէն սկսեալ։ Նոյն դարի Ասորի պատմագիր Ձենոբ Գլակ կը վկայէ, որ Հոներուն դէմ տարած յաղթանակէն ետք, Տրդատ թագաւոր եւ Գրիգոր Լուսաւորիչ, ինչպէս նաեւ Հայ աւագանին, Աստուծոյ գոհութիւն յայտնելու համար, բազմաթիւ արջառներ, նոխազներ ու դառներ գոհ մատուցած են եւ բաժնած աղջատներուն։

Հայկական մատաղը ո՛չ մէկ կապ ունի հեժանոսական կամ հրեական զոհաբերուժիւններուն հետ։ Մեր մատաղը առընչուած է առաջեայներու ԱԳԱՊԷ-ին (սիրոյ ճաչ) հետ։

Մեր եկեղեցւոյ մէջ մատաղ կը կատարուի հիմնական երե<u>ք</u> նպատակներով.

ա. Փրկութեան յոյսի եւ մեղջերու թեղութեան Համար

բ․ Ննջեցեալներու Հոգիներուն Հանգստութեան Համար եւ

գ. Աստուծոյ պարգեւած չնորհըներուն դիմաց երախտադիտութիւն յայտնելուհամար

Սովորաբար, մատաղ կը կատարուի Տէրունական, Տաղաւար կամ այլ կարեւոր տօներուն, սուրբ սեղան կամ սուրբ խաչ Հաստատելու առիթով…եւայլն։

Հին ատեն յանձնարարուած էր մատաղ կատարել իւրաքանչիւր Պատարագէ ետք։ ԺԲ դարու Հայ աստուածաբան-փիլիսոփայ Պօղոս Տարօնացին կ՛րսէ, որ Քրիստոսի մարմինն ու արիւնը ճաչակելէն ետք, նախ պէտք է օրՀնուած եւ աղահար միս ուտել, ապա որեւէ բան։

Այստեղ հիմնականը սակայն, մատաղը նուիրողին հաւատքը, հոգիի անկեղծութիւնն ու սրտի մաքրութիւնն է։ Հին Կտակարանէն կը յիչենք, որ Աստուած Աբէլի մատաղը ընդունեց, իսկ Կայէնինը՝ ո՛չ։

MADAGH

Madagh is a mercy offering intended for the poor and needy. The Armenian Book of Ritual contains first the blessing of salt Intended for the madagh and then the blessing of the madagh. Madagh should be totally consumed and is distributed freely and without charge. One may offer madagh for a specific vow or in memory of loved ones on a special holiday. Presently, madagh is most often distributed on April 24 or the closest Sunday thereto in commemoration of the Armenian Martyrs. Traditionally, madagh is boiled lamb.

The mercy offering is one of our Christian duties. Madagh is only one means of helping the poor and needy.

Special "Thank You"

• To Mr. & Mrs. Samuel & Irene Berberian for donating the grapes and madagh

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

• *S. Եւ S. Սամուէլ և Իռէն Պէրպէրեաններուն՝ Խաղող եւ* մատաղ նուիրեյնուն համար



<u>Այս տարի Հոգեհանգիստ կարելի չէ կատարել Հետեւալ տաղաւար</u> տօներուն.

- Կիրակի, Օգոստոս 17......Մուրբ Աստուածածին
- <u>Կիրակի</u>,,Սեպտեմբեր 14......Խաչվերաց

NO HOKEHANKISD SERVICES ON FEAST SUNDAYS:

August 17......Assumption of the Holy Mother of God September 14.....Exaltation of the Holy Cross



2024 & 2025 Membership Dues – Parishioners who have not paid their 2024 Annual Membership dues are encouraged to remit payment. 2025 Membership Dues are also accepted now. The membership fees are \$150.00 per adult and \$50.00 for each full time student ages 18-26. These dues are 100 percent tax deductible.

2025 FEASTS

August 17	Assumption of the Holy Mother of God
September 14	Exaltation of the Holy Cross
September 27	Saint Kevork (George)
September 28	Holy Cross of Varak
October 11	Holy Translators
October 26	Discovery of the Cross
	Feast of All Saints
November 8	Holy Archangels Gabriel & Michael
November 29	Saint Thaddeus and Saint Bartholomew
December 13	Saint Hagop (James) of Nisibis
December 23	Saints David the Prophet & Holy Apostle James
December 25	Saint Stephen the Protomartyr
December 27	Saints Peter and Saint Paul
December 29	The Holy Apostle James & John the Evangelist



Upcoming Easter Dates:

Sunday, April 5, 2026

Sunday, March 28, 2027

Sunday, April 16, 2028

Sunday, April 1, 2029

Sunday, April 21, 2030

Sunday, April 13, 2031

Sunday, March 28, 2032